ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. հուլիսի 11-ից 14-ը Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

   Արմեն Հայրապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Քաղաք Լյուքսեմբուրգ, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, 2019թ. հուլիսի 11-ից 14-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկ (ԵՆԱԲ)

5. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի 4-րդ տարեկան հանդիպմանը

6. **Քննարկված թեմաները՝**

Քննարկված հարցերի թվում առանցքային էր Հայաստանի Հանրապետության՝ ԵՆԱԲ-ին հնարավոր անդամակցության և դրան վերաբերող ընթացակարգերին ապահովմանն առնչվող հարցերը:

Առաջին ընդհանուր նիստի ներկայացվեցին բանկի գործունեության տեսլականը և ուղղությունները, ընդգծվեց ինչպես բանկի անդամ հանդիսացող ասիական և եվրոպական երկրների համագործակցության կարևորությունը ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման շրջանակներում, այնպես էլ նոր անդամների ներգրավման կարևորությունը:

Դրան հաջորդեց ԵՆԱԲ արտոնյալ ֆինանսավորման և դրամաշնորհային համագործակցության հնարավորությունների վերաբերյալ քննարկումը, որի նպատակն էր վերհանել ԵՆԱԲ և Զարգացման ֆինանսական ինստիտուտների միջև համագործակցության հնարավորությունները՝ մասնավորապես, բացահայտել արտոնյալ ֆինանսավորումը ԵՆԱԲ դրամաշնորհային միջոցների հետ համատեղելու և նման համագործակցության հնարավոր ձևաչափերը:

Առաջին օրվա քննարկումները եզրափակվել են բանկի կառավարիչների կլոր-սեղան քննարկմամբ, որին մասնակցելու հրավեր ստացել էին միայն բանկի Կառավարիչները, վերջիններիս փոխարինող անձինք և ԵՆԱԲ հնարավոր անդամ-պետությունների պատվիրակությունների ղեկավարները:

Հաջորդ օրվա աշխատանքները շարունակվեցին Ասիական ենթակառոցվածքային ֆորումի ներքո կայացած «Համագործակցություն ենթակառուցվածքների միջոցով» խորագրով քննարկման շրջանակներում: Վերջինիս նպատակն էր բարձր մակարդակի երկխոսության միջոցով նպաստել անդրսահմանային կապերի ամրապնդմանն ուղղված ներդրումների իրականացմանը, ինչպես նաև Ասիայում համագործակցության դյուրինացմանը՝ ենթակառուցվածների դերի բարձրացմանը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԵՆԱԲ փոխնախագահ Դ.Ալեքսանդրի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետության՝ ԵՆԱԲ-ին հնրավոր անդամակցության գործընթացին առնչվող հարցերը, ներառյալ՝ հնարավոր անդամակցության դեպքում ՀՀ կողմից ձեռք բերվելիք բաժնետոմսերի չափի հստակեցմանն առնչվող հարցերը:

Ի թիվս ընդհանուր հանդիպումների, հնարավորություն եմ ունեցել մասնակցելու նաև մի շարք առանձին պանելային քննարկումների: Մասնավորապես՝ պարտքի կայունության և մակրոտնտեսական հարցերին վերաբերող հանդիպման նպատակն էր քննարկել, թե ինչպես զարգացող երկրները կարող են մեծացնել ներդրումները իրենց տնտեսություններին անհրաժեշտ ենթակառուցվածքներում՝ միևնույն ժամանակ խուսափելով գլոբալ տնտեսության մեջ առկա անորոշություններով և պարտքի անկայունությամբ պայմանավորված խոչընդոտներից:

Ենթակառուցվածքների կայունության զարգացման և ապահովման վերաբերյալ քննարկման նպատակն էր ապահովել հարթակ բնապահպանական և սոցիալական նախաձեռնությունների ցանցի և գործարար միջավայրի զարգացման համար, ինչպես նաև աջակցել շահագրգիռ կողմերին ապահովելու ազգային և միջազգային տարբեր բնապահպանական և սոցիալական համաձայնագրերով ստանձնած իրենց պարտականությունները և բարձրացնել իրազեկումը կայուն զարգացման շրջանակներում ԵՆԱԲ-ի հանձնառությունների վերաբերյալ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

ԵՆԱԲ փոխնախագահ Դ.Ալեքսանդրի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ԵՆԱԲ-ին ՀՀ-ի հնարավոր անդամակցության հարցին անդրադառնալ՝ ՀՀ կառավարությունում համապատասխան ներքին քննարկումներ անցկացնելուց և վերջնական դիրքորոշում ձևավորելուց հետո:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

17.07.2019թ"